## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՇԵՆՔԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՄԱՏՈՒՑՄԱՆ»
## «19» փետրվարի2020 ԹՎԱԿԱՆԻ
## N «ՀՀ ԼՄՎՔ-ԳՀԱԾՁԲ-20/12»
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Վանաձոր

«20» մարտի 2020թ.

Վանաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մ.Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Կ և Ա Մոնտաժշին» ՓԲԸ-ն,ի դեմս տնօրեն Ս.Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով «19» փետրվարի 2020թ. N «ՀՀ ԼՄՎՔ-ԳՀԱԾՁԲ-20/12» (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված Վանաձոր համայնքի փողոցային լուսավորության, շենքերի արտաքին լուսավորության սպասարկման և շահագործման ծառայությունների մատուցման համար ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրի 4.1. կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պայմանագրի գինը 2020 թվականի համար կազմում է 19860000 (տասնինը միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:»:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

### 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

### 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածները կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

ՀՀ Լոռու մարզ Վանաձորի համայնքապետարան
ք. Վանաձոր Տիգրան Մեծի պող., 22 շենք
ՀՎՀՀ՝ 06901936
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900232553025
համայնքի ղեկավար

_____________ Մ.Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Կ և Ա ՄՈՆՏԱԺՇԻՆ»ՓԲԸ
Լոռու մարզ, ք.Վանաձոր
Վարդանանց 2ա
ՀՎՀՀ՝ 06907967
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
Հ/Հ՝ 2050222007241001

Տնօրեն _____________ Ս.Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2
«19» փետրվարի 2020 թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ-ԳՀԱԾՁԲ-20/12»ծածկագրով պայմանագրի
Համաձայնագիր 1-ի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Դիմացվճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50231200/501 | ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ՇԵՆՔԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 3309999.8 | 4964999.8 | 6619999.669 | 8274999.586 | 9929999.5 | 11584999.42 | 13239999.34 | 14894999.26 | 16549999.17 | 18204999.09 | 19860000 | 19860000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Լոռու մարզ Վանաձորի համայնքապետարան
ք. Վանաձոր Տիգրան Մեծի պող., 22 շենք
ՀՎՀՀ՝ 06901936
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900232553025
համայնքի ղեկավար

__________ Մ.Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Կ և Ա ՄՈՆՏԱԺՇԻՆ»ՓԲԸ
Լոռու մարզ, ք.Վանաձոր
Վարդանանց 2ա
ՀՎՀՀ՝ 06907967
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձորի մ/6
Հ/Հ՝ 2050222007241001

Տնօրեն __________ Մ.Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ